

ԿՐՕՆԱԿԱՆ

«Թէ մոռացայց զքեզ Երուսաղէմ, մոռացի եւ զիս աջ իմ»:

(Սաղմ. 137:5)

Մեր բնաբանին բառերը՝ բառերն են Բաբելոնի թագաւորութեան բանականներէն պարտուած Հրեայ ժողովուրդին: Անոնց սուրբ քաղաքը քարուքանդ եղած, կողոպտւած և ապա կրակի տրուած էր: Սողոմոն թագաւորի կառուցած գեղեցիկ տաճարը սրբապղծուած և աւերակ վիճակի մէջ թողուած էր: Երբեմնի հպարտ, ինքզինքնին Աստուծոյ ընտրեալ ժողովուրդ կարծողները շղթայակապ գերի տարուած էին օտար երկիր մը: Այդ միեւնոյն ժողովուրդը, որ քաղաքակիրթ աշխարհին ծանօթ էր իր Աստուծոյ և փրկութեան նուիրուած երգերով, հիմա սակայն զինք գերեվարողներուն կողմէ դարձած էր ծիծաղի առարկայ, որոնք նախքան Յուդայի երկիրը գրաւելը ուսումնասիրած էին իրենց թշնամիին մշակոյթը, ունկնդրելով անոնց երգերը, ձօնւած իրենց ամենակարող Տիրոջ, «Տէր օգնական և ապաւէն իմ, ես յուժմէ՞ երկեայց», որուն համար ալ Բաբելացի գերեվարները ծաղրելով կ'ըսէին հրեաներուն. «Երգեցէ՛ք մեզի Սիոնի ձեր երգերէն»: Որուն պատասխանը կ'ըլլար հարցում մը միայն, որ կը խորհինք թէ աւելի ուղղուած էր ինքզինքնուն, «Ինչպէ՞ս կրնանք մեր Տիրոջ փառքը երգել օտար երկրի մը մէջ»:

Այս սաղմոսը կու տայ հարազատ պատկերը Երուսաղէմի, երբեմնի Սիոնի գաղթական բնակիչներուն: Անոնք այլեւս հոն չէին և չէին վայելեր անոր պարիսպներու ապահովութիւնն ու պաշտպանութիւնը, այլ հիմա նստած Եփրատ գետի ափերուն այդ գետին ջուրերուն նման առատ արցունքներ կը թափէին, և հաւանաբար կ'անիծէին այն վայրկեանը որ զիրենք վերապրեցուցած էր իրենց քաղաքի պաշարումէն, որուն համար Սրբազան Սաղմոսացը անիծելով կ'անիծէ ինքզինք և բոլոր անոնք, որոնք կը մոռնան Երուսաղէմը, ըսելով. «Երուսաղէ՛մ, Երուսաղէ՛մ, եթէ քեզ մոռնամ, թող աջ բազուկս ալ զիս մոռնայ, և թող լեզուս քիմքիս փակի»: Անկասկած այս զգացումը անծանօթ չէ մեզի՝ Հայերու, դարերով հալածուած ու տեղահանուած, սակայն առանց երբեք մոռնալու մեր հայրենիքը, մեր ծննդավայրը, մեր զգացումներուն և ապրումներուն առանցքը:

Սակայն ի՞նչն էր որ կու գար հարուածել Յուդայի թագաւորութիւնն ու Հրեայ ժողովուրդը, եթէ ոչ անոնց ամբողջական անտեսումը իրենց հայրերու Աստուծոյն. որովհետեւ անոնք կ'աղօթէին իրենց Աստուծոյ և եթէ Ան չպատասխանէր անոնց խնդրանքներուն և աղօթքներուն՝ անոնք կը փորձէին դիմել ուրիշ աստուածներու օգնութեան: Հրեայ թագաւորներ սկսած էին հեռանալ Աստուծոյ պատուիրաններէն, հետեւելով դրացի երկիրներու մեծաւորներու օրինակին. ու իւրաքանչիւր յաղթանակ, որ այդ երկիրներու թագաւորները կ'արձանագրէին, այդ պատճառ կ'ըլլար որ հրեաներ անոնց աստուածները իրենց Աստուծոյ աւելի զօրաւոր նկատէին, բան մը որ Աստուծոյ և Հրեայ ժողովուրդին միջեւ եղող խրամը աւելի կը լայնցնէր:

Հազարամեակներ են անցած այդ բախտորոշ դէպքերէն ի վեր, և սակայն դժբախտաբար պատմութիւնը տակաւին կը կրկնէ ինքզինք, թէեւ ժողովուրդներն ու թատերաբեմերը եղած են տարբեր: Հայ ժողովուրդը եւս զանազան հանգրուաններու ունեցած է իր պատմութեան Բաբելոնը, երբ ան քաղաքական պայմաններու, և

երբեմն ինչու չէ տնտեսական պատճառներու բերումով, բռնի դուրս տարուած կամ ելած է իր երկրէն ու ցրուած աշխարհով մէկ: Որքան որ հին է հայկական Սփիւռքը, նոյնքան և աւելիով հին է Հայուն ներկայութիւնը Ս. Քաղաք՝ Երուսաղէմէն ներս, ուր մեր նախահայրերը ունեցած են հեռատեսութիւնն ու իմաստութիւնը ո՛չ միայն իրենց գոյութիւնը քաշկուտելու, այլ ապագային դառնալու հրամայական ներկայութիւն մը, ուր ներկայիս Սուրբ Տեղեաց մէջ միայն տաս միլիոն հաշուող ժողովուրդ մը՝ Հայ ժողովուրդը համահաւասար իրաւունքներ կը վայելէ մէկ միլիառ հաշուող Կաթոլիկ և կէս միլիառ հաշուող Օրթոտոքս եկեղեցիներուն հետ: Ու մինչեւ այսօր, հազարաւոր տարիներ ետք, պահած իր բացառիկ հմայքը, այդ նոյն Երուսաղէմը, կեդրոնը՝ երեք գլխաւոր Միաստուածեան կրօնքներուն, տակաւին հեռուներէն իրեն կը քաշէ իր զաւակները, և նոյնիսկ եթէ Ֆիզիքապէս հոն չգտնուին, առիթներ կը ստեղծեն իրար մօտ գալու և յիշելու Երուսաղէմը, «Թէ մոռացայց զքեզ Երուսաղէմ, մոռասցի եւ զիս աջ իմ»:

Ս. Քաղաք Երուսաղէմը, սիրելի հայորդիներ, դարերով եղած է Հայուն խիղճն ու պատիւը. Հայուն տունը: Հայ Ուխտաւորը՝ սկսեալ սովորական շինականէն, արհեստաւորէն, վաճառականէն, մինչեւ ազնուականն ու արքան, եկած են Երուսաղէմ կատարելու իրենց իրա՛ւ քրիստոնեայի ուխտն ու պարտականութիւնը: Ուխտաւոր Հայեր, այդ օրերուն, յանձն կ'առնէին երկա՛ր ու վտանգներով լեցուն ճամբորդութիւն մը, անոնք յաճախ դէմ յանդիման կու գային մահուան, որուն համար ալ անոնց կը տրուէր «Մահտեսի» անունը: Այս ուխտաւորները մղուած իրենց աներեր հաւատքէն կ'անտեսէին ամէն վտանգ և դժուարութիւն միայն կատարելու իրենց սրտի պարտքը, ուխտը, իրենց հետ բերելով նաև իրենց սրտաբուլիս նուէրները, որոնց շնորհիւ է որ ցայսօր Հայոց Պատրիարքարանը կը վայելէ օտարներու յարգանքն ու հիացումը, կանգուն է ու կամօքն Ամենակալին պիտի մնայ կանգուն:

Հայոց Պատրիարքարանը չէ եղած օգտուող և շահագործող հաստատութիւն մը միայն, ինչպէս շատեր կը խորհին կամ կ'ուզեն տեսնել. Ա. և Բ. Համաշխարհային պատերազմի օրերուն Հայոց Պատրիարքարանն էր, որ լայն բանալով իր դռները օգնութեան կը հասնէր աղէտեալ և գաղթական հայորդիներուն, տուն ու տեղ տալով անոնց և նոյնիսկ կիսելով միաբանութեան հացի պատառը անոնց հետ:

Ն.Ա.Մ.

